ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1893-Ա « 10 » ապրիլի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.65 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԵՐԵՆԻԿ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Դերենիկ Վոլոդյայի Հարությունյանի (ծնված 26.12.1956թ.) դիմումը: Երևանի Շենգավիթ, Մուսայելյան փողոց հ.65 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 423.4քմ, որից՝ 392.0քմ մակերեսով հողամասը Դերենիկ Վոլոդյայի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հ.ԵԴ2/7523/02/24 վճիռ, 26.11.1996թ. հ.1636 սեփականության վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 30.03.2026թ. հ.ԱՏ-3002026-01-0713 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 08.04.2026թ. հ.20-Ել-104192 եզրակացությունը, համաձայն որի Երևանի Շենգավիթ, Մուսայելյան փողոց հ.65 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Շենգավիթ, Մուսայելյան փողոցի հ.65 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Դերենիկ Վոլոդյայի Հարությունյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 392.0քմ մակերեսով հողամասին կից 31.4քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 31.4քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևանի Շենգավիթ, Մուսայելյան

փողոց h.65 հասցեում գտնվող 423.4քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ